











# ԴՐԱՄԱԿԱՆ ԵՒ ՔԱՐՈՉՉԱԿԱՆ ՔԱՌՍ ՄԵ ԿԸ ՅԱՏԿԱՆՇԷ ԵՐԵՍՓՈՒՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Վերջին ընտրութիւններուն մասնակցած բոլոր թեկնածուները ոչ մէկ քննադատութիւն ուղղեցին կառավարութեան՝ ընտրական գործընթացը վարելուն եւ իր անկողմնակալութեան գծով, այսուհանդերձ շատ քաղաքական գործիչներ եւ վերլուծողներ շեշտեցին կարգ մը ազդակներու վրայ, որոնք մեծ ազդեցութիւն ունեցան ընտրութիւններու արդիւնքներուն վրայ, ինչպէս՝ ընտրական տարածքներու ոչ-հաւասար բաժանումը եւ թեկնածուներու ծախսերուն անհակազէտելիութիւնը ու քարոզչական արշաւներու կազմակերպման չզոյլութիւնը:

Եւ հակառակ անոր որ Լիբանանի ընտրական օրէնքներու պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով կառավարութիւնը կը պատրաստէր ընտրարշաւներու կազմակերպման եւ ընտրական ծախսերու վերաբերող օրէնքի նախագիծ մը, սակայն ան շատ քիչ նկատի առնուեցաւ ընտրութիւններուն ընթացքին:

Դրանական եւ քարոզչական ինչպիսի՞ քառս մը ստեղծուեցաւ վերջին երեսփոխանական ընտրութիւններուն ընթացքին, այս առնչութեամբ ի՞նչ կ'ըսէ կառավարութեան որդեգրած օրէնքը եւ ի՞նչպէս ուրիշ երկիրներ կը վարուին այս հարցին հետ:

Լիբանանեան «*Նահար*» թերթի աշխատակից Ռուլա Պայտուն թերթի Երկուշաբթի, 18 Սեպտեմբերի թիւով փորձած է պատասխանել վերոյիշեալ հարցումներուն՝ վկայակոչելով նաեւ միջազգային աղբիւրներ:

Ստորեւ համադրաբար կու տանք «*Նահար*»-ի մէջ լոյս տեսած վերլուծութիւնը:

«*Քաղաքական դրամ*»- քանիցս վարչապետ Սելիմ Հրոս Գործածեց այս արտայայտութիւնը՝ քննադատելու համար նախկին վարչապետ Ռաֆիք Հարիրին, եւ թեկնածուներ ամբաստանեցին իրենց մրցակիցները այս «զէնք»-ի գործածութեան եւ ձայներն ու խօսքերը գնելու յանցանքներով: Այս առնչութեամբ շարք մը տարածաշնունքիւններ խոսեցան կարգ մը թեկնածուներու 50 միլիոն տոլարէն մինչեւ 100 միլիոն տոլար ծախսելուն մասին:

Այս գծով բարձրաստիճան պաշտօնատարներէն շատեր անդրադարձան այս երեւոյթին, որ մեկնարաններու համաձայն, գերազանցեց նախորդ ընտրութիւններուն եղածները, թերեւս անոր համար, որ շատ կը միլիոնատէր եւ միլիարատէր թեկնածուներուն թիւը եւ տնտեսական վիճակը՝ նահանջի մէջ:

Կառավարութիւնը այս տարուան 19 Յունուարին համաձայնած էր ներքին գործոց նախարարութեան պատրաստած մէկ օրէնքի նախագիծին, որ կ'առնչուէր ընտրական ծախսերուն: Այս օրէնքը 27 Յունուարին ուղարկուեցաւ խորհրդարան, սակայն ոչ մէկ յանձնախումբ ուսումնասիրեց գալիս:

Օրէնքը յստակացուց, թէ անհատաբար առաջարկած թեկնածուներու առաւելագոյն ծախսը պէտք է ըլլայ 150 միլիոն ոսկի: Իսկ եթէ ան միանայ ցանկի մը, անոր առաւելագոյն ծախսը կ'ըլլայ 50 միլիոն ոսկի, իսկ մնացեալ ծախսերը կը ներառուին ցանկի ընդհանուր ծախսերուն մէջ:

## ՄԻՒՍ ԵՐԿԻՐՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Նկատելի է, որ տեղական ընտրական առաւելագոյն ծախսը բարձր է Լիբանանի տարածութեան, բնակչութեան թիւին, երեսփոխանական ասիոններուն եւ քուէարկողներուն համեմատութեամբ, մանաւանդ որ թեկնածուն վերոյիշեալ ծախսերէն գատ իրաւունք ունի նաեւ 100 միլիոն ոսկի ծախսելու ընտրական քարոզչութեան եւ ծանուցումի համար:

Այս առնչութեամբ Լիբանանի եւ ուրիշ երկիրներու միջեւ տարբերութիւնը այն է, որ ուրիշ պետութիւններ յաճախ ամբողջութեամբ կամ մասնակիօրէն կը մասնակցին ընտրական ծախսերուն: Երբեմն պետութիւնը կը մասնակցի նաեւ փոխադրութեան, քարոզչութեան, ընտրական ծանուցումի եւ այլ ծախսերու:

## ԹԵՐԹԵՐ ՈՒՆԵՅՈՂ ԹԵՎԵԼՈՒՆԵՐ

Լիբանանեան համայնարանի իրաւաբանական բաժանմունքի ղեկավար եւ վարչապետ Սելիմ Հրոսի խորհրդական դոկտ. Իսամ Մուլէյման կը շեշտէ ընտրական քարոզչութեան հարցը կարգ մը գործիքներու կիրառմանը կարեւորութեան վրայ՝ ըսելով. «Երբեք մը մէջ, ուր կարգ մը թեկնածուներ թերթեր եւ հեռատեսիլի կայաններ ունին, կարելի է բոլորին միջեւ նուազագոյն հաւասարակարգութիւն ստեղծող օրէնքի մը հաստատումը, մանաւանդ որ ուրիշ թեկնածուներ թերթի մը մէջ ծախսելու են»:



Քարոզչական քառսն տեսարան. Թրիփոլի

նուցում ղեկավար դրամ չունին»:

Ներքին գործոց նախարարութեան օրէնքին նախագիծին պատրաստութեան համար Մուլէյման սկզբնական առաջարկներ ներկայացուցած էր այս հարցին գծով՝ գլխաւորաբար առնուած ֆրանսական օրէնքն: Կան շարք մը տարբերութիւններ Մուլէյմանի առաջարկներուն եւ նախարարութեան նախագիծին միջեւ:

Այսպէս, մինչ առաջինը կը նշէ, թէ իր ընտրարշաւը կը սկսի ընտրութիւններէն մէկ ամիս առաջ, կառավարութեան վաւերացուցած օրէնքին նախագիծը կը ձեռնարկէ քուէարկողները ընտրելու հրահրող հրամանագիրի հրապարակման օրը:

## ԳԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Ներքին գործոց նախարարութեան բանաձեւին համաձայն, օրինախախտման իւրաքանչիւր փորձ բաւարար պատճառ կրնայ համարուիլ ընտրութիւններու արդիւնքները չեղեալ նկատելու նպատակով Սահմանադրական խորհուրդի դիմելու համար:

Սակայն շատ յաճախ օրէնքները չեն կիրարկուել ընտրութեամբ, որովհետեւ երբեմն թեկնածուներ կը խուսափին ուրիշները ամբաստանելէ, որպէսզի անոնց հետ բանավէճի կամ մանրամասնութիւններու մէջ չ'մտնեն, որոնք յաճախ կրնան վնասակար ըլլայ նաեւ իրենց համար:

Սակայն այս բոլորը Լիբանանի չեն արգիլեր, որ աշխատի դրամական ծախսերու, քարոզչութեան եւ ընտրական ծանուցումի քառսը սահմանափակելու ընտրութիւններու ընթացքին: Այս հարցը կարելի է լուծել մօտ առեւելք, մանաւանդ որ շատ մը պաշտօնատարներ, որոնց կարգին խորհրդարանի նախագահ Նեպիհ Պրրի, յայտնեցին իրենց փափաքը արդար եւ արդիական ընտրական օրէնք մը պատրաստելու գծով՝ նորոնտի խորհրդարանի պաշտօնավարման առաջին տարուան ընթացքին:

## «ՎԱՍ»-Ի ԻՐԱՎԻՃԱԿ՝ ԸՆԴՈՒՊԵՏԱԿԱՆ ԸՆՏՐԱՐՇԱԻՒՆ ՄԷՋ

# ՊՈՒՇ ԾՈՒԱՐԱԾ ԿԸ ՄՆԱՅ ԿՈՐԻ ԴԻՄԱՅ

Շուարունի եւ կասկածներու շարժումները եւ իր ընտրանքները վերատեսուեցան ենթարկելու համար թեքսաս արձակուրդի երթելի ետք, Միացեալ Նահանգներու նախագահական թեկնածու Ճորձ Պուշ շարունակեց իր ընտրական արշաւը՝ որը չ'գիտի փոփոխութեան ենթարկելով իր որդեգրած ոճը (ուղղակի շփման մէջ մտնելով քուէարկողներուն հետ), մինչ վիճակագրական տուեալներ ցոյց կու տան, թէ իր եւ դեմոկրատական թեկնածու Ալ Կորի միջեւ տարբերութիւնը մեծ էլ եւ վերջինս չ'նշին տոկոսով մը միայն կ'անցնի Պուշէն:

Մինչ այդ բանավէճը կը շարունակուի Պուշի եւ Կորի միջեւ, բարոյական հարցերու շուրջ կառավարական տեղեկագիրի մը հրապարակումէն ետք, որ Հոյսիփուտի եւ այլ ընկերութիւններու շարժապատկերի, պատկերաստիւնի եւ երաժշտութեան բնագաւառները կ'ամբաստանէր սեռային ընդմիջի նկատելու արտադրութեամբ: Անակնկալ քայլով մը նաեւ նախագահ Պիլ Քլինթոնը եւ թեկնածու Ալ Կորի ունեն քննադատութիւններ ուղղեցին արտադրական այս բնագաւառին դէմ, որ կը նկատուի դեմոկրատականներու ֆինանսաւորման գրոյխաւոր աղբիւր՝ անկէ պահանջելով գոյուշ ըլլայ, այլպէս դաշնակցային կառավարութիւնը արգելքներ պիտի հաստատէ անոր դէմ:

Պուշ սկսաւ ընտրական աշխուժ գործունէութեամբ լեցուն շարժմը, որ կ'ընդգրկէ հինգ օրուան ընթացքին այցելել «պատերազմի դաշտեր» նկատուած հինգ նահանգներ: Այս այցելութեան ընթացքին Պուշ քուէարկողներուն պիտի փորձէ ըսել, թէ ինք «տարբեր տեսակի հանրապետական մըն է»:

Աններեւ կը այն, որ Պուշ իր շրջագայութիւնը սկսաւ Ֆլորիտա նահանգէն, ընկերակցութեամբ իր եղբորը, որ Ֆլորիտայի նահանգապետն է: Այս ձեւով ան ընդունեց, որ մինչեւ քանի մը շարժմը առաջ իրեն նկատմամբ համակրանք ցուցաբերած նահանգը ներկայիս ուժգին կերպով կուռախնձորի վերածուած է:

Այս գծուարութիւնները, գործ Պուշ կը դիմագրաւէ Ֆլորիտայի մէջ, կ'արտացոլեն այն իրականութիւնը, որ Պուշի ընտրարշաւը տեղատուութիւն մը կ'ապրի Դեմոկրատական Կուսակցութեան համագումարի աւարտէն ետք, որ մեծ թափ մը տուաւ Ալ Կորի - Լիպերման արշաւին:

Պուշի շուրջած վիճակը ժխտական կերպով անդրադարձաւ հանրային կարծիքին վրայ, բայց մը, որ աւելցուց թեկնածու Կորի յաջողութեան հաւանականութիւնները, ինչպէս նաեւ աւելցուց Հանրապետական Կուսակցութեան ղեկավարութեան մէջ ի յայտ եղած մտահոգութեան զգացումները այն արագութեամբ, որով Պուշ կորսնցուց իր երկար ամիսներու առաջատար դիրքը:

Պէտք է նշել նաեւ, որ լրատուական միջոցները եւ վերլուծաբանները ակնարկները նպաստեցին կշիռն փոխելու փոփոխութեան ենթարկելու աշխատանքին: Անոնցմէ կարելի է յիշել երկու շարժապատկեր «Նիւ Եորք Թայմզ» թերթին մէջ յայտ տեսած երկարաշունչ յօդուած մը, որ Պուշի համակիր հանրապետական կարգ մը ղեկավարներու վերագրեց այն խոսքը, որ իրենք մտահոգ են Պուշի ընտրական արշաւին ունեցած տեղատուութեանը:

Թերթեր նաեւ նշեց, որ կարգ մը հանրապետականներ խոսած են հանրապետական ընտրական արշաւի շրջանակներուն մէջ տիրող «վախ» իրաւիճակին մասին: Այս յօդուածը պատճառ դարձաւ, որ թերթերու եւ հեռատեսիլի ցանցերու մէջ նոր վերլուծումներու, գուշակութիւններու եւ յօդուածներու հեղեղ մը սկսի: Արձաճոճաճ բոլոր միտքերն այլ հանդիպեցան կէտի մը, որ Պուշ կը գտնուի անելի մը մէջ եւ չի գիտեր, թէ ինչպէս վերակսի իր արշաւը կամ խանդավառութիւն ստեղծել քուէարկողներուն մէջ:

Պուշ տակաւին կը շարունակէ իր քննադատութիւնները կեղծոնացնել Կորի անձին եւ վստահելութեան: Սակայն Պուշ փորձեց նաեւ պատասխանել Կորի ուղղուած այն ազգու քննադատութիւններուն, որոնց համաձայն, Պուշ յստակ եւ յաւ պատկերացում մը չունի կարգ մը հարցերու լուծման համար, ինչպէս՝ բժշկական պատուաստներ, տարեցներու սփռուող ակտիւններ: Ասիկա կարելի էր հարց մըն էլ քուէարկողներուն այն շերտին համար, որ մեծ համեմատութիւններով կը քուէարկէ աւանդականներին եւ կը բնակի կարելի նահանգներու մէջ, ինչպէս՝ Ֆլորիտա:

Ֆլորիտայի իր ընտրական շրջագայութեան ընթացքին թեկնածու Ճորձ Պուշ իր մրցակիցը ամբաստանեց իր կեցուածքները խեղաթիւրելու յանցանքով եւ վախճանելու մարտավարութեան որդեգրումով: Ան նաեւ քուէարկողները գոյուշացուց, որ համատան դեմոկրատականներու այն խոսքերուն, ըստ որոնց, ինք պիտի գրկէ գիրքը ընկերային ապահովագրութեան դրուութեան իրենց յատկացուած նպաստներէն:

«Սաֆիր»

### ԱՆՆԱԽԸՆԹԱՑ ԱՌԻԹ

Վերամուտի նախօրեակին Ընտանիքի Բոլոր Անդամներուն

Առանց Վնասումի, Ակոսկանքի Ընդհանուր Քննութիւն, Ցուցմունքներ և Մաքրութիւն (Detartrage)

Պէրուքի Ֆրանսական Համալսարանէն Վկայեալ՝ Տոքթ. Էլա Սաքամբի Տոքթ. Սարգի Տէր Մեարդպեանի Տոքթ. Գեորգ Քէշիշեանի


Վայր՝ Լ. Օ. Խ. Ա. Պուլտրեբեան Ընկերա-Բժշկական Կեդրոն 14 - 30 Սեպտեմբեր 2000

Ներկայանալ ժամադրութեամբ՝ հեռաձայնելով 01- 253793/4/5/6

Կազմակերպութեամբ՝ Լ. Օ. Խ. Յըբ. Վարչութեան Առողջապահական Յամաձայնութիւնի և Ա. Պուլտրեբեան Ընկերա-Բժշկական Կեդրոնի նախագգուշական Բաժանմունքին

ՀԱՄԻԿ ՍԱՍՈՒՆԵԱՆԻ ՀԱՍՅԵՆ  
HAMPIG SASSOUNIAN C - 88440  
CSP - L.A.C. D -5- 232 44750  
60-TH ST. WEST LANCASTER,  
CA, 93536  
USA

«ԱՁԴԱԿ»-Ի ՀԵՌԱՁԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ  
«ԱՁԴԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն. - 258526, 260115 եւ 241274:



ՀԵՏԱԹՐՔՐԱԿԱՆ

ԻՆՉ ԳԻՏԵՆՔ ՍԽՏՈՐԻՆ ՄԱՍԻՆ



ՀԱԳԱՆՆԵՆԻՉ

Մխտորը առաւելարար ծանօթ է իր հականերին յատկութեամբ: Շատ հին դարերէն ի վեր վանքերուն մէջ սխտոր կը գործածուէր վերքերը դարմանելու համար: Պատերազմներու ժամանակ այ սխտոր կը գործածուէր փտախտի դէմ դնելու համար:

Այսօր գիտականօրէն փաստուած է սխտորին հականերին յատկութիւնը:

Հաս ծ կք արդ եօք, թէ եզրագծայիններ եւ ապա յոյները սխտորը գործածած են համաճարակներէ (ժանտախտ, բորոտութիւն, կրիփ) պաշտպանելու համար:

Իսկ հումէլացիները սխտոր կը դնէին օձի, կարծիքի եւ այլ միջատներու պատճառած խայթուածքներուն վրայ:

ՈՐԳԱՆԱՆՆԵՐ

Հին եզրագծայինները սխտորէ պատրաստուած մանեակ մը կ'անցընէին աղիքային ուղի տառապողներուն վրայ:

Նոյնպէս այ հումէլացիները սխտոր կը թելադրէին մարմնին մակարոյններէն ձերբարկուելու համար:

ՍՐՏԻ ՊԱՇՏՊԱՆ

Այսօր սխտորը ճանչցուած է նաեւ մէկ այլ կարեւոր յատկութեամբ, որ կը շահագործէ շատերը: Անպէս, ան կրնուեզեցնէ արեան գերձնուածը եւ կ'արգիւնէ երակներուն ներքին պատերուն վրայ թանձրացած արեան կուտակման, ինչ որ սրտի կաթուածի զխաւը պատճառներէն մէկն է:

ՔԱՂՅԿԵՂԻՆ ԳԼՄ

Բժշկական ուսումնասիրութիւններու համաձայն, սխտոր կանխարդիւնողի դեր կը կատարէ աղիքի քաղցկեղին պարագային:

Իսկ փորձեր ցոյց տուած են, թէ սրտային ներարկումներ ստացած առեւտները դարմանուած են քաղցկեղին ուսերէ, ինչ որ նոր յոյսեր կը ներշնչէ բժշկութեան:

ՔՈՆՏՐԻԲՈՐՈՒՆ ԳԼՄ

Բժշկականօրէն փաստուած է նաեւ, որ սխտորին հետեւողական գործածութիւնը կը պակասցնէ դէժ քոլեքթրոլին տոկոսը, իսկ միւս կողմէ՝ կ'աւելցնէ յաւինը...

ԱՅՆ ԲՈՒԺԻՉ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Վերջապէս, սխտորը ճանչցուած է նաեւ իրրեւ միջոցնող եւ պնդութեան դէմ պայքարող: Անիկա թելադրելի է նաեւ հագի եւ շնչառական հիւանդութիւններու պարագային:

ՍԽՏՈՐԻՆ ԾԱԳՈՒԹԸ

Կը կարծուի, որ Կասպից ծովու արեւելքը գտնուող ընդարձակ դաշտերէն ծնունդ առած է սխտորը եւ ապա տարածուած է գլխի Իտալիա, Չինաստան, եզրագծային:

ՉԻՆԱՍԱՆ - ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔ

Քրիստոսէ 3000 տարի առաջ Չինաստանի մէջ սխտորը իրրեւ համեմ կը գործածուէր ճաշերու պատրաստութեան մէջ: Նոյն շրջանին Իրաքի հարաւ-արեւելքը շումերները արձանագրութիւններու վրայ սխտորին մասին:

ԵԳԻՊՏՈՍ

Հին եզրագծայինները սխտոր շատ կը գործածէին, անիկա հացին հետ ձրիօրէն կը բաժնուէր բուրգերը կառուցող բանուորներուն:

Նշենք, որ եզրագծայինները սխտոր կը գործածէին մոմիաներու պատրաստութեան մէջ:

ՀԵՂՎԱՍԱՆ

Հինուաններու սրբազան գիրքին՝ Վեատային մէջ սխտորը նշուած է Քրիստոս-

սէն 1800 տարի առաջ:

ՃՈՑՆԵՐԸ

Հին յոյները սխտորը կը կոչէին «գէշ հոտող վարդը»: Անիկա երկար ատեն ֆիզիքական ուժի խորհրդանիշ եղած է եւ, հետեւաբար, գինուորներն ու մարզիկները առատօրէն սխտոր կ'ուտէին:

Այսուհանդերձ սխտորին անախորժ հոտը պատճառ դարձած էր, որ անիկա արհամարհուի բարձր դասին կողմէ եւ կարգ մտածարները մուսք գործելը արգիւտած էր սխտոր ուտողներուն:

ՀՈՒՍՔԱՅԻՆԵՐԸ

Հումէլացիներն են, որ սխտորը տարածեցին ամբողջ Եւրոպայի (Սպանիա, Ֆրանսա, Անգլիա...) մէջ:

Հասարակ ժողովուրդը ու գինուորները առատօրէն կը սպառէին, մինչդեռ բարձր խաւը վերապահ էր սխտորին հանդէպ:

ԱՐԱՐՆԵՐԸ

Մխտորը իսլամներուն մօտ եւս շատ տարածուած էր, եւ Մոհամէտ մարգարէ ժողովուրդին կը թելադրէր սխտոր ուտել:

ՀՐԵԱՆԵՐԸ

Քրիստոսէ առաջ 1250ի քսոսին հրեաները անձկութեամբ յիշեցին իրենց ետին ձգած վարունգը, սեխը, սոխն ու սխտորը...

ՅՐԱՆՍԱ - ՇԱՐԼԸՄԱՆԸ

Մխտորին յատկութիւններուն ծանօթ Շարլըման պարտադրեց, որ սխտոր ցանուի բոլոր պարտէկներուն մէջ: Վանքերուն բանբարանոցները նոյնպէս առատ էին սխտորի տունկերով:

ԳԻՏԵՔ, ԹԸ...

Ֆրանսայի Հանրի Դ. Թագաւորը շատ սխտոր կ'ուտէր: Գնունքին մեծ հայրը սխտորի կտորով մը շփած է անոր շոթքները՝ շարժել պաշտպանելու եւ ուժ պարգեւելու համար:

Անգլիացի աշխարհահռչակ թատերագէտ Ալեքսանդր Կոքսը շատ սխտոր ազնուականներուն յարմար ուտելիք մը չէր: Առողարեւ, Անգլիոյ մէջ սխտորը գործածութիւնը վերապահուած էր աղքատներուն՝ իբրեւ գեղ, եւ ոչ թէ՛ ուտելիք:

Յոն Քրիստոսի հեղինակը՝ Աբրիամ-Թէա կը խրատէր սխտոր եւ սոխ չուտել, որովհետեւ անոնց հոտը անմիջապէս կը կայանէր գիւղական ծագումին եւ, հետեւաբար, սխտոր կամ սոխ ուտողը իբրեւ գիւղացի կ'արհամարհուէր:

ԼՈՒՍԱՌ ԳԱՂԱՓԱՐՆԵՐ

Advertisement for 'S.A.N. ԲՈՅՍԵՐՈՒՆ ԱՊԱՀՈՎ ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆԸ' (S.A.N. Bousseroun Apahov Phoxaroun) featuring a lightbulb icon and text describing the product's benefits for vision and health.

ԱՅԼԱՉԱՆ

ԷԼԻՉԱՊԷԾ ԹԱԳՈՒՆՆԵՐ

Անգլիոյ Էլիզապէթ թագուհին առաջին անգամ ըլլալով առեւտուի աշխարհ մուտք կը գործէ: Այո՛, ան որոշած է Անգլիոյ եւ Սկոտլոնդի իր զուգ բնակարաններուն պարտէզներուն մէջ աճող խնձորենիները օգտագործել եւ շուկայ իջեցնել խնձորի հիթի մտքով անուանուած մը:



ՊՐԻԺԻԹ ՊԱՐՏՕ

Ֆրանսական շարժապատկերի անմահ աստղերէն Պրիժիթ Պարտոնիւն 4,500 տոլար տուգանք սը սահմանուեցաւ ցեղային խտրականութիւնը քաջալերած ըլլալու ամբաստանութեամբ:



30 տարիէ ի վեր շարժապատկերի աշխարհէն հեռացած դերասանուհին ամէն գնով հեռու կը մնայ լուսարձակներէն եւ առանձնացած կեանք սը կը վարէ:

ՆՈՐԱՋԵՒՈՒԹԵԱՆ ԱՅԽԱՐԷՆ



Այսօր նորածնութեան աշխարհին մէջ անհեթեթի մեծ դեմք է Շանէլ նորածնութեան տան ձեւագէտ Քարլ Լակըր-ֆիլտը: Ան 1983էն ի վեր կը փորձէ մէկ կողմէն պահպանել Քօքօ Շանէլի ոճն ու շունչը եւ միւս կողմէ՝ նոր պատկերացումներով ստեղծել այնպիսի յաջողակներ, որ Շանէլ իր վարկն ու դիրքը անխախտ պահէ եւ յարատեւ նորածնութեան աշխարհէն ներս:

Ո՞՞՞ Է ՔԱՐԼ ԼԱԿՐՖԻԼՏ Մինձ է 1938ին, Համպուրկ: 15 տարեկանին հաստատուած է Փարիզ: Որոշած է նորածնութեան աշխարհ մուտք գործել եւ այդ գծով ուսանել է ետք, առաջին քայլերը կ'առնէ «Պարմէն» նորածնութեան տունէն ներս, ապա կը գործակցի «Փան Փաթոն» նորածնութեան տան հետ:

Հազիւ քսան տարիքը ամբողջացուցած՝ ցերեկային հագուստներ կը յղանայ «Յենտի» եւ «Քյոլ» նորածնութեան տուններուն, մինչեւ որ կը ստանձնէ Շանէլ նորածնութեան տան տնօրինութիւնը:

Քարլ Լակրֆիլտ կը իսպի գերմաներէն, ֆրանսերէն եւ իտալերէն: Ան քաջածանօթ է ժողովուրդներու սովորութիւններուն եւ աւանդուրիւններուն: Արուեստի սիրահար եւ շատ ուսեալ Լակրֆիլտ նաեւ նշանաւոր լուսանկարիչ է եւ կը գործակցի աշխարհահռչակ նորածնութեան ամսաթերթներուն հետ:

Մագնուով գերմանացի նշանաւոր այս ձեւագէտը տեւաբար կը ճամբորդէ Փարիզի, Միլանի եւ Մոնթե-Քարլոյ միջեւ, անոր հոգիներէն է որոշ ոճի տուններու... հաւաքածոն: Ան կը գնէ ու կը կահաւորէ տուներ, ապա կը լուսանկարէ զանոնք:

Ան կը իրատուանի, որ իր յառաջիկայ տունը պիտի ընտրէ Սպանիայէն եւ զայն պիտի յարգարէ ճափոցի ճարտարագէտ Քարտու Անտոն: Այդ տան մէջ Լակրֆիլտ պիտի տեսնուի իր մանկութեան նշանները եւ շատ հաւանաբար այդ տան մէջ վերջնականապէս պիտի հաստատուի ասպարէզէն քաշուելէ ետք:

Նկարներուն մէջ կը տեսնենք անուանի ձեւագէտը եւ անոր անբաժան հովանաբը. ինչպէս նաեւ՝ անոր վերջին յաջողակներէն նմուշ մը:

ՄԱՐԼԵՆ ՄՈՆՐՈՅԻ

Վերջերս Թոքիոյ փառատունցին քացուսից ցուցադրուած է անուանի դերասանուհի Մարլեն Մոնրոյի մարգարտեայ մանեակը, գործուած էր ամուսինը՝ Ժօ Տիւս Ժիօ, 1954ին, իրենց մեղրալուսինն առիթով: Նշենք, որ մանեակը կ'արժէ աւելի քան 9,300 տոլար:



ԿԻՆ ԸՆԲՐԺԱՎԱՐՆԵՐ Ա. Մ. ԸՄԻՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԷՋ

Մոցի երկիրներուն մէջ առաջին անգամ ըլլալով կին շարժավարներ կը գործեն:

Արդարեւ, Տուայաի մէջ 7 կիներ իբրեւ թաքսի վարորդ պիտի փոխադրեն միմիայն երեսուններէն կիներ, որոնք ազգային տարազը կը կրեն:

Եթէ ամէն քան լաւ ընթացայ, 23 այլ կիներ պիտի ձեռնարկեն նոյն գործին:

Նշենք, որ վերոյիշեալ 7 կիները 3 ամսուան դասընթացքի են մարզումի հետեւած են: Անոնցմէ մէկը յայտնած է, թէ ան այս գործին գծով հանդիպած է իր ընտանիքին բուն ընդհանրութեանց եւ ընդվզումի, բայց ինք հասնուած է, թէ ինք իր երկրին անանորութիւններուն դէմ սխալ քայլ սը չ'առնէ:



ԽՈՒՍԱԳԻՐ

ՍՄԲՈՒԿՈՎ «ՇԷՅՆ ՄԸՀՇԻ»

- Պատրաստութեան համար պէտք ունիք...
• 300 կրամ մանրուած միսի
• Երկու հատ հասուն յոյիկի
• Մէկ քիւս միջակ չափի երկար սմբուկի
• Տապկոցի համար բուսական ձկնի
• Սուրճի գաւաթ մը սնուպարի (գինձ)
• Ապուրի 2 զգայ յոյիկի ջուրի
• Աղի, սեւ պղպեղի եւ կասիայի
• Միջակ չափի սոխի մը



Պատրաստութեան կերպը...
Մարուկները կեղուել եւ կոթերը վրան ձգելով՝ երկայնքին երկուքի կիսել, ապա աղի եւ ժամանակ մը ետք բուսական ձկնի մէջ տապկել ու ծծուն թուղթի վրայ փոխադրել:

Միւս կողմէ, տապակի մը մէջ ապուրի 3 զգայ բուսական ձկնի մէջ մանրուած սոխը դարձնել, աւելցնել միսը եւ մերթ ընդ մերթ խառնելով, տապկել, մինչեւ որ եփի, ապա աւելցնել համեմներն ու սնուպարը եւ 3 վայրկեան եւս տապկել:

Ափսոսի մը մէջ շարի տապկուած սմբուկները, անոնց կեղորոնները փոսիկները բաւալ պատառաքողի մը միջոցով, ապա լեցնել միսով միջուկը:

Լոյիկի ջուրով լուծել, ապա երկու յոյիկները կեղուել ու շատ մանր մանրել, ստացուած խառնուրդը աղի ու սմբուկներուն վրայ թափել:

Ափսոսի փուռ փոխադրել եւ 20-30 վայրկեան եփել:

Հրամցնել «պամաթի» բրինձով պատրաստուած եղինձով:

Բարի՛ ախորժակ:

Պատրաստեց ԸՆԴՅՈՒՅ ՄԱՒԻՍԱԳԱԼԵԱՆ

ՇԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ
«Ազգային» մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիծը ընթացիկ գիրով (հաստատութեանց պարագային)՝ նախընտրաբար պաշտօնական քուղի վրայ, եւ հաստատածը ներկայացրելով «Ազգային» ծանուցումներու գրասենեակը:






ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ ԱՇԽԱՐՀԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Երեւանի մէջ տեղի ունեցող աշխարհի ճատրակի երկրորդ փուլի մրցումները...

ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԷՆ ՆԿԱՐՆԵՐ



Ռուսիկ Պետրոսեան ընդվզած՝ ծախողութեան վրէժը կը լուծէ... Երկաթեան ծանրերը:



100 մետրի նոր հսկան՝ հոլանդացի Հուլընգանտ:



Մարմնամարզիկ ռուս Ալեքսէյ Նեմով ուրախ՝ իր շահած ոսկի մետալով:

Կոչը հաւասարութեամբ աւարտեցին իրենց էլոյթը: Լեւոն Արոնեան պարտութիւն մը կրեց Ռուբեն Ֆելքսիէն (Արժանիք)...

Աղջկանց մրցումներուն, Լիլիթ Մկրտչեան հաւասարութիւն մը արձանագրեց Էլիզապէթ Պայնիցի (Գերմանիա)...

Բ. հանգրուանին հայրենի մարզիկներուն էւ մարզիկներուն մրցակիցներն են (առաջին անգամ նշուած անունները մրցումը կը սկսին ձեռնակ քարերով):

- ՏՂԱՔ Գ. Սվետոզկին (Մոլդովա) - Կարէն Ասրեան Գ. Յակոբեան (Ռուսիա) - Վարուժան Յակոբեան Լեւոն Արոնեան - Գ. Կոլթէնպէրկ (Քանադա) Գ. Չիան (Չինաստան) - Գաբրիէլ Սարգսեան Գաիթ Յարութիւնեան Գ. Բոլեմ (Լեհաստան) ԱՂՋԻԿՆԵՐ Լիլիթ Մկրտչեան - Ա. Ուշենինա (Ուքրաինա) Նելլի Արիանեան - Ռ. Ասարթի (Հնդկաստան) Եու Ռուս (Չինաստան) Նարինէ Գասպարեան Լիլիթ Գալոյեան - Մակտայեան Գլորիա (Չեխ)

ՀԱՅ ՄԱՐԶԻԿՆԵՐ՝ ԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԲԵՐ ԽՈՒՄԲԵՐՈՒ ՏԱՐԱԶՆԵՐՈՎ

Ողիմպիական խաղերուն մասնակցող շատ մը հայ մարզիկներ իրենց ելոյթները կը կատարեն ստար երկիրներու շապիկով: Եթէ այդ մէկը հաճելի կը թուի շատերու, թիւս կողմէ կը մտահոգէ նաեւ շատեր, որովհետեւ այդ մարզիկները Հայաստանի պատիւը կրնային պաշտպանել շահելով մետալներ՝ Հայաստանի համար:

Հայ մարզիկները ընդհանրապէս այդ իմաստով կը մասնակցին ըմբշմարտի մրցումներուն:

Յունահունական ոճի ըմբշմարտի մրցումներուն կը մասնակցին Միխիթար Մանուկեան (63 քկ., Շուշու), Արմէն Նազարեան (58 քկ., Պուլկարիա), Ալեքսան Ստեփանեան (58 քկ., Ուքրաինա), Արա Արբազեան (70 քկ., Շուշու) եւ Դաւիթ Մանուկեան (70 քկ., Ուքրաինա), իսկ ազատ ոճի ըմբշմարտի մրցումներուն՝ Դաւիթ Պողոսեան (58 քկ., Վրաստան): Աւստրալիոյ անուանով իրենց մրցումները կը կատարեն հանրածանօթ Եուրի Սարգսեան (62 քկ.), Սերգո Չախոյեան (85 քկ.) եւ Ալեքսան Կարապետեան (94 քկ.):

Նշանառութեան մրցումներուն իր մասնակցութիւնը կը բերէ Արթուր Ալվազեան (Ուքրաինա), իսկ բռնցքամարտի մրցումներուն՝ Վարդան Զաքարեան (Գերմանիա) եւ Տիգրան Ուլուկեան (Յունաստան):

ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐ. ՍԻՏԵՒ 2000

ՓՈՓՈՎ ԵՂԱՒ ՄԵԾԱԳՈՅՆ ՊԱՐՏԵԱԼԸ, ԹԵՒՒ ՏԻՐԱՅԱՒ ԱՐԾԱԹ ՄԵՏԱԼԻՆ

Ողիմպիական խաղերու Տիտ օրուան աւարտին, շատ հաւանաբար արձանագրուած բոլոր արդիւնքները շուրջ մէջ մնան, պարզապէս որովհետեւ բոլոր լուսարձակները կեդրոնացած էին ռուս լողորդ Ալեքսանտր Փոփովի վրայ, որ չկրցաւ իր տիրապետութիւնը հաստատել 100 մետր պատ լողին մէջ եւ հանդիսացաւ երկրորդ (արծաթ մետալ), ոսկին կիցելով հոլանդացի Փիլիքսըր Վան Տէն Հուլընգանտին, որ Սիտի 2000ի մեծագոյն անակնկալը կը նկատուի երեք օրէ ի վեր: Ան կհասարտական մրցումներուն (Երեքշաբթի օր) այս մարզին մէջ հաստատած էր աշխարհի նոր մրցանիշ՝ 47" 84, գահընկէց ընելով Փոփովը, իսկ Կիրակի օր 200 մետր պատ լողի մրցանիշ հաստատած էր, գահընկէց ընելով աւստրալիացի Իան Թորիլը:

Երէկ, ծանրաբարձութեան մրցումներուն, 69 քկ. կշիռի մարզիկն մէջ, հայաստանցի Ռուսիկ Պետրոսեան թէեւ Տիտ հանդիսացաւ եւ մետալի չարձանագրաւ, սակայն իր մասին բաւական մեղմ հուսերով կամ խօսիլ տուաւ: Ան 19 տարեկան է եւ շատ փոքր է յարաբերաբար մրցակիցներուն: Այդ իսկ պատճառով յաճախ շատ խուսելու անոր մասին, իբրեւ ասպազալ ախոյեան: Մեկնաբաններ վայել կը նկատեն յատուկ ոճ ունեցող ծանրաբարձ մը: Հետաքրքրական էր Ռուսիկի արտայայտութիւնը վերջին փորձէն ետք, ան էր ձախողեցաւ բարձրացնել 148 քկ. (147,5 յաջողած էր բարձրացնել), «անիծեց» իր... բախտը եւ սկսաւ հարուածել գետին գոնուող երկաթե ծանրութիւնը, զոր շէր կրցած բարձրացնել:

ԵՐԷԿՈՒԱՆ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ

ՆԵՏԱՐԱԿՈՒՄ

- ԱՆՀԱՏԱԿԱՆ (ՏՂԱՔ) Ոսկի - Սայմըն Ֆերուէտըր (Աւստրալիա) Արծաթ - Վիքթոր Վուստեյլ (Մ. Ն.) Պրոնկ - Վիլիամ Վան Ալթեն (Հոլանտա)

ԹԻՍՎԱՐՈՒԹԻՒՆ

- ՉՈՅԳ ՏՂԱՔ Ոսկի - Փաուլ Հոլշտեյն (Սլովակիա) Փիլքըր Հոլշտեյն (Սլովակիա) Արծաթ - Քրիստոֆ Քոլմանսքի Միշալ Սթանիսլավսքի (Լեհաստան) Պրոնկ - Մարտի ժիրաս Թոմաս Մատէր (Չեխիա)

● ԱՆՀԱՏԱԿԱՆ (ՏՂԱՔ)

- Ոսկի - Թոմաս Ծմիթ (Գերմանիա) Արծաթ - Փոլ Ռեյքլիֆ (Բրիտանիա) Պրոնկ - Փիլիպպոս Ֆերացի (Իտալիա)

ՇԵՇԵԼԱՐՇԱԲ

- ՍՓՐԻՆԹ (ՏՂԱՔ) Ոսկի - Մարի Նոթթէյն (Մ. Ն.) Արծաթ - Ֆլորիան Ռուս (Ֆրանսա) Պրոնկ - Ենս Ֆիլլըր (Գերմանիա)

● ՍՓՐԻՆԹ (ԱՂՋԻԿՆԵՐ)

- Ոսկի - Ֆելիսիա Պալանտեր (Ֆրանսա) Արծաթ - Օքսանա Կրիշչինա (Ռուսիա) Պրոնկ - Իրինա Եանովիչ (Ուքրաինա)

● ԿԵՏԵՐՈՒ ՄՐՅՈՒՄ (ՏՂԱՔ)

- Ոսկի - Խուան Լանդերա (Սպանիա) Արծաթ - Միլթըն Ուինսթոն (Ուրուկուէյ) Պրոնկ - Ալեքսէյ Մարքով (Ռուսիա)

ՍՈՒՄԵՐԱՍԱՐՏ

- ԱՆՀԱՏԱԿԱՆ (ՏՂԱՔ) Ոսկի - Քիմ Եունկ - Հօ (Հարաւային Բորեա) Արծաթ - Ռալֆ Պիտոբ (Գերմանիա) Պրոնկ - Տիմոթի Շեվչենքօ (Ռուսիա)

ՄԱՐՄԱՍԱՐՁ

- ԱՆՀԱՏԱԿԱՆ (ՏՂԱՔ) Ոսկի - Ալեքսէյ Նեմով (Ռուսիա) Արծաթ - Եանկ Ուէյ (Չինաստան) Պրոնկ - Ալեքսանտր Պերէշ (Ուքրաինա)

ԺԻՏՕ

- 70 ԶԿ. (ԱՂՋԻԿՆԵՐ) Ոսկի - Սիլվիա Վերանէս (Քուպա) Արծաթ - Քէյթ Հաուի (Բրիտանիա) Պրոնկ - Շօ Միլ - Սան (Հարաւային Բորեա) Իլենիա Սքափին (Իտալիա)

● 90 ԶԿ. (ՏՂԱՔ)

- Ոսկի - Մարք Հուլիսկա (Հոլանտա) Արծաթ - Քարլոս Հոնորաթօ (Պրաչին) Պրոնկ - Ֆրեդերիք Տեմոնֆաուս (Ֆրանսա) Ռուսիան Մաշուրենքօ (Ուքրաինա)

ՆՃԱՆԱՌՈՒԹԻՒՆ

- 50 ՄԵԹՐ (ԱՂՋԻԿՆԵՐ) Ոսկի - Ռենաթա Մաուրըր - Ռոպանսա (Լեհաստան) Արծաթ - Թաթիանա Կոլտոպինա (Ռուսիա) Պրոնկ - Մարիա Ֆեյլիքովա (Ռուսիա)

● ՏՂԱՔ

- Ոսկի - Ռիչըրտ Ֆաուլտս (Բրիտանիա) Արծաթ - Ռասըլ Մարք (Աւստրալիա) Պրոնկ - Ֆեհայտ Ալ Տիհանի (Քուէյթ)

ԼՈՂԱՐՇԱԲ

- 200 ՄԵԹՐ ԿՈՒՐԾՔԻ ԼՈՂ (ՏՂԱՔ) Ոսկի - Տոմէնքօ Ֆիորավանթի (Իտալիա)

- Արծաթ - Թերէնա Փարքին (Հարաւային Աֆրիկէ) Պրոնկ - Տաիտ Ռուսոյօ (Իտալիա)

● 200 ՄԵԹՐ ԹԻԹԵՆԻՒԿ (ԱՂՋԻԿՆԵՐ)

- Ոսկի - Միսիլ Հայմըն (Մ. Ն.) Արծաթ - Սիլվի Օնիլ (Աւստրալիա) Պրոնկ - Փեթրիա Թոմըս (Աւստրալիա)

● 100 ՄԵԹՐ ԱԶԱՏ ԼՈՂ (ՏՂԱՔ)

- Ոսկի - Փիլքըր Վան Տէն Հուլընգանտ (Հոլանտա) Արծաթ - Ալեքսանտր Փոփով (Ռուսիա) Պրոնկ - Կէրի Հոլ Ճէյ. Ար. (Մ. Ն.)

4x200 ՄԵԹՐ ԽՄԲԱՅԻՆ ԱԶԱՏ ԼՈՂ (ԱՂՋԻԿՆԵՐ)

- Ոսկի - Մ. Ն. Արծաթ - Աւստրալիա Պրոնկ - Գերմանիա

ԾԱՆՐԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

- 75 ԶԿ. (ԱՂՋԻԿՆԵՐ) Ոսկի - Մարիա Իգայի Ուրուկուէյ (Քուբայիա) Արծաթ - Ռուս Օկայէֆօ (Նիկերիա) Պրոնկ - Քիլո Եի - Հանկ (Թայլանտ)

- 69 ԶԿ. (ՏՂԱՔ) Ոսկի - Կալապին Պոլիպի (Պուլկարիա) Արծաթ - Կէրիլ Մարքով (Պուլկարիա) Պրոնկ - Սերկէյ Լաւրենով (Պիլոնուսիա)

ՄԵՏԱՆԵՐՈՒ ԴԱՍԱՌՈՐՈՒՄ

Տիտ օրուան մրցումներէն ետք, այժմ մետալներու ընդհանուր դասաւորումը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.

	ՈՍԿԻ	ԱՐԾԱԹ	ՊՐՈՆԿ
Միացեալ Նահանգներ	10	7	6
Աւստրալիա	7	8	7
Ֆրանսա	6	7	3
Չինաստան	6	4	7
Հոլանտա	5	1	2
Իտալիա	4	2	6
Ռուսիա	3	7	6
Գերմանիա	3	4	4
Ճափոն	3	3	1
Պուլկարիա	3	1	1
Բրիտանիա	2	5	2
Հարաւային Բորեա	2	4	4
Ուքրաինա	2	3	3
Քուպա	2	1	2
Ռուսիան	2	1	1
Սպանիա	2	0	1
Թուրքիա	2	0	0
Սլովակիա	1	3	1
Չինեզիա	1	2	1
Լեհաստան	1	1	0
Հունգարիա	1	1	0
Չեխիա	1	0	3
Շուէտ	1	0	1
Քանադա	1	0	1
Մեքսիկա	1	0	0
Լիբիանիա	1	0	0
Նորուեգիա	1	0	0
Քուբայի	0	2	1
Պիլոնուսիա	0	1	3
Հարաւային Աֆրիկէ	0	1	1
Թայլանտ	0	1	1
Հիւսիսային Բորեա	0	1	1
Յունաստան	0	1	1
Եւրոպայիա	0	1	0
Ուրուկուէյ	0	1	0
Նիկերիա	0	1	0
Ինտոնէզիա	0	0	2
Քուպա Ռիքա	0	0	2
Քելճիքա	0	0	2
Թայլանտ	0	0	1
Փորթուգալ	0	0	1
Լատվիա	0	0	1
Քուէյթ	0	0	1
Խորվաթիա	0	0	1
Հնդկաստան	0	0	1
Վրաստան	0	0	1
Էսթոնիա	0	0	1

